ԱԿՆԱՐԿ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԵՏԱՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՀԵՍՏՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

(XIX դ. երկրորդ կես)

ԳՈՀԱՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հայաստանում մետաղամշակման և հարակից արհեստների տարածված լինելու ապացույցներ են հնագիտական պեղումներից հայտնաբերված զենքերը, պղնձե ամանները և կենցաղային ու երկրագործական տարբեր իրերն ու առարկաները։ Մետաղագործությունը և արհեստները Հայաստանում զարգացած էին տակավին միջնադարում և պահպանվեցին նաև կապիտալիստական հարաբերությունների առաջացման ժամանակաշրջանում։

XIX դ. 70-ական թվականներից սկսվում է շվեդական, ռուսական, ֆրանսիական, անգլիական, գերմանական, բելգիական կապիտալների հոսքը Անդրկովկաս, որոնք, հետապնդելով գաղութային նպատակներ, օբյեկտիվորեն նպաստում էին տեղի արտադրողական ուժերի, հատկապես հանույթային արդյունաբերության զարգացմանը[1]։ Օտարերկրացիները սկսեցին շահագործել Ախթալայի, Ալավերդու, Զանգեզուրի պղնձի ու արծաթի հանքերը։ Ստացվող պղնձի մեծ մասը արտահանվում էր Ռուսաստան, իսկ մնացած մասը օգտագործվում էր տեղում՝ արհեստագործության մեջ։

Տեղեկություններ կան, որ մետաղագործական արհեստները տարբեր վայրերում զանազան համամասնությամբ էին տեղաբաշխված։ Այսպես, 1864 թ. Օրդուբադի գավառը ուներ 20 դարբին (որոնցից 10-ը աշխատում էին գյուղերում), 1 զինագործ, 1 փականագործ և 3 պայտար[2]։ Նախիջևան քաղաքում կային 3 դարբին, 3 զինագործ, 7 պայտար, իսկ գյուղերում գործում էին 25 դարբին, 4 պայտար[3]։ Ալեքսանդրապոլում աշխատում էին 80 դարբին, 40 պայտար և 12 փականագործ, իսկ գյուղերում՝ 32 դարբին, 25 պայտար[4]։

XIX դ. երկրորդ կեսին ռուսական կապիտալիզմը լայնությամբ զարգանալով, իր հորձանուտի մեջ է ներքաշում նաև Անդրկովկասը, այդ թվում և Հայաստանը, և բնականաբար, դուրս են մղվում մի շարք հինավուրց արհեստներ։ Նկատելի անկում են ապրում նաև մետաղագործությունը և հատկապես զինագործությունը։ Ա. Պիրալովը գրում է. «Մեր աչքերի առաջ անհետանում է զինագործական արհեստը, և զինագործները փորձում են իրենց

---

1 Մ. Ադոնց, Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը XX դարի սկզբին, Երևան, 1968, էջ 187։

2 ՀՍՍՀ կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆ. 125, ց. 1, գ. 7, թթ. 110—111 (այսուհետև՝ ՀՍՍՀ ԿՊՊԱ)։

3 ՀՍՍՀ ԿՊՊԱ, թթ. 89—90։

4 ՀՍՍՀ ԿՊՊԱ, թթ. 30—31։

տեխնիկական գիտելիքները փոխարինել արտադրության նոր ձևերով, աշխատելով հարմարվել ժամանակակից կյանքի նորանոր պահանջներին։ Կովկասի տնայնագործ-զինագործը, ներմուծվող առավել որակյալ արտադրանքի մրցակցությանը դիմանալու համար, գործադրում էր մեծ ջանք ու վարպետություն՝ աշխատելով 16—18 ժամ, որի համար օրական վարձատրվում էր միայն 15—20 կոպեկ»[5]։ Բնական է, այդպիսի լարվածությունը երկար չէր կարող տևել, և վաղ թե ուշ այդ արհեստը դատապարտվելու էր մահվան։

Հալ զինագործներն ու փականագործները հարմարվելով ստեղծված իրավիճակին, ձեռնամուխ եղան հիմնականում գյուղատնտեսական գործիքներ պատրաստելու և վերանորոգելու գործին, քանի որ գյուղական դարբնի ըզբաղմունքն անբաժանելիորեն կապված էր հողագործության հետ։ Եթե քաղաքներում և խոշոր բնակավայրերում դարբին-վարպետներն իրենց արհեստով զբաղվում էին ամբողջ տարին և այն համարվում էր նրանց ապրուստի միակ միջոցը, ապա գյուղերում աշխատում էին 4—5 ամիս, իսկ մնացած ժամանակը նվիրում գյուղատնտեսական աշխատանքներին՝ եկամուտ ստանալով և՛ արհեստից, և՛ հողագործությունից։

Դարբին-վարպետների վարձատրության կարգը այսպիսին էր. տվյալ գյուղի դարբինը համագյուղացիների համար պատրաստում և վերանորոգում էր պահանջված քանակությամբ գյուղատնտեսական գործիքներ, իսկ դրա փոխարեն պատվիրատու-գյուղացիների մի մասը պարտավորվում էր վարել, ցանել նրա հողաբաժինը և հավաքել բերքը, ոմանք էլ վարձահատույց էին լինում բնամթերքով՝ ցորենով, գարով, պանրով, յուղով կամ դրամով։ Հարեվան գյուղերի դարբինների պատրաստած իրերը մեծ մասամբ վաճառվում էին կանխիկ դրամով։ Առուծախը կատարվում էր ուղղակի արհեստանոցում։ Ըստ Կ. Խատիսովի՝ 1880—1890-ական թվականներին դարբին-տնայնագործի տարեկան եկամուտը կազմում էր 120—125 ռուբլի[6]։ Հայաստանի որոշ շրջանների մետաղագործ-արհեստավորների արտադրանքը համեմատաբար բարձրորակ էր և նույնիսկ որոշ չափով արտահանվում էր այլ վայրեր։ Այսպես, Օրդուբադի գավառի գարբին-փականագործ և պղնձագործ վարպետներն իրենց արտադրանքն արտահանում էին Պարսկաստան և Թուրքիա[7]։

Կային նաև շրջիկ դարբիններ, որոնք ժամանակավոր աշխատում էին այն գյուղերում, որտեղ չկային համապատասխան արհեստավորներ։ Նրանք միաժամանակ զբաղվում էին արտադրած առարկաների ագատ վաճառքով. Զանգեզուրի Շվանիձոր գյուղի արհեստավորների մասին ասված է. «Գյուղում կա մի որմնադիր և մի հյուսն։ Դարբինը գնում-գալիս է. սա մի «թափառականն» արհեստավոր է, որ գյուղե գյուղ է ման գալիս և ժամանակավորապես պարապում իր արհեստով։ Այս տիպի արհեստավորներ շատ կան Զանգեզուրի գավառներում և յուրաքանչյուրն իր գյուղերի շրջանն ունի»[8]։

Մինչև XIX դ. 80—90-ական թվականները դարբին-տնայնագործներն արտադրում էին պարզունակ և միօրինակ գյուղատնտեսական գործիքներ ու կենցաղային իրեր։ Դրությունը փոխվեց, երբ XIX դ. վերջում Անդրկովկաս-

---

[5] А. Пиралов, Краткий очерк кустарных промыслов Кавказа, СПб., 1913, стр. 44.
[6] К. Хатисов, Кустарные промыслы Закавказского края, Тифлис, 1891, стр. 65.
[7] «Сборник статистических сведений о Кавказе», т. I, Тифлис, 1869, стр. 41.
[8] «Մուրճ», 1900, № 3, էջ 346։

ինչպես նաև Հայաստան, ներթափանցեցին եվրոպական և ռուսական արտադրության գյուղատնտեսական գործիքներ ու մեքենաներ։ Դարբիններն արդեն «ձեռնարկում էին ոչ միայն տեղական գութանի, բահի, դանակի, տարբեր տեսակի մեքենաների մետաղյա մասերի պատրաստումը, այլ նաև մրկրստի, ածելու արտադրությունը։ Նրանցից ավելի հմուտները վերանորոգում էին ֆաբրիկային արտադրության գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ. երբեմն էլ փորձված վարպետները ձգտում էին ֆաբրիկային արտադրանքի օրինակով պատրաստել նույնատիպ առարկաներ»[9]։

XX դ. սկզբին սկսում են առաջ գալ կատարելագործված դարբնոց-արհեստանոցներ, որոնք արտադրում են նորորակ գութաններ ու գործիքներ։ Նման ձեռնարկություններում արդեն կիրառվում էր վարձու աշխատանքը։ Այդպիսին էին Ղարաքիլիսայի (Կիրովական) գութաններ արտադրող «Նադեժդա» արհեստանոցը[10], մետաղագործական արտադրության մի շարք արհեստանոցներ Երևանում, Ալեքսանդրապոլում և Վաղարշապատում։ Հայտնի է, որ 1893 թ. տվյալներով՝ մետաղագործական առանձին արհեստանոցներ արդեն ունեին հնգական վարձու բանվորներ կամ ենթավարպետներ[11]։

Դարբնի պարզունակ հնարավորություններով արհեստանոցը շատ դանդաղ էր վերածվում ազատ արհեստային և մանուֆակտուրային արտադրության, քանզի Անդրկովկասում չկային տնտեսական և քաղաքական համապատասխան պայմաններ։ Ընդհակառակը՝ «XIX դ. վերջում ռուսական ինքնակալությունը միջոցներ է ձեռնարկում Անդրկովկասում տնայնագործության հիմքի վրա առաջացող և աճող գյուղատնտեսական գործիքների ֆաբրիկային արտադրության արգելակման համար, որպեսզի ապագայում, երբ կենտրոնում զարգանար գյուղատնտեսական մեքենաշինությունը, ռուսական արդյունաբերական կապիտալը, հանձին ծայրամասերի, պահպաներ իր շուկաները»[12]։

Հայաստանի արհեստավորները զանազան առարկաներ՝ պղնձե կաթսաներ, թասեր, մատուցարաններ, վառարաններ, ափսեներ, լուսամփոփներ, սափորներ և այլն պատրաստելու համար իբրև հումք օգտագործում էին պղինձը։ Երևանի նահանգում պղնձի մշակումը հիմնականում տարածված էր Օրդուբադում, Ալեքսանդրապոլում և Կարսի մարզում։ 60-ական թվականներին Օրդուբադի գավառում գործում էին պղնձագործական չորս արհեստանոցներ, որոնք ունեին մեկական վարպետ և մեկ-երկուական ենթավարպետներ կամ աշակերտներ։ Ինչպես ցույց են տվել հետազոտությունները, յուրաքանչյուր արհեստանոցի տարեկան մաքուր եկամուտը կազմում էր 350—450 ռուբլի[13]։

Կարսի մարզի պղնձագործ վարպետները վերցնում էին վարձու բանվորներ և աշակերտներ։ Վերջիններս 1—5 տարի պարտավոր էին վարպետի համար աշխատել առավոտից մինչև ուշ երեկո (12 ժամից ավելի), իսկ

---

9 П. Гугушвили. Развитие промышленности в Грузии и Закавказье в XIX—XX вв., Тбилиси, 1957, стр. 164.

10 «Տնայնագործների համագումար», Թիֆլիս, 1909, էջ 165։

11 А. С. Амбарян, С. Л. Амбарян, К характеристике промышленности Восточной Армении в конце XIX века («Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 2—3, էջ 202)։

12 П. Гугушвили. Նշվ. աշխ., էջ 165։

13 «Сборник статистических сведений о Кавказе», стр. 64.

շուտափույթ պատվերների դեպքում նաև գիշերներն ու ընդմիջման ժամերին։ Աշակերտները հիմնականում չէին վարձատրվում, և արհեստանոցների տերերը միայն հագցնում և կերակրում էին նրանց։ Բայց որոշ վարպետներ երբեմն վճարում էին, որը տարեկան կազմում էր 5—20 ռուբլի։ Այդպիսի ձեռնարկությունները արհեստայինից աստիճանաբար անցնում էին մանր ապրանքային արտադրության, իսկ ձեռնարկատերերը վեր էին ածվում մանր բուրժուաների[14]։

Օրդուբադի պղնձագործները հիմնականում ձուլում էին տարբեր չափերի կաթսաներ, իսկ Կարսի մարզում, հատկապես Կաղզվանի շրջանում՝ կարմիր և դեղին պղնձից արտադրում էին ամաններ։ Կարմիր պղնձից պատրաստած ամանների մեկ ֆունտը (409,5 գրամ) արժեր 80 կոպեկ, իսկ դեղին պղնձից պատրաստվածը՝ 30 կոպեկ[15]։ Արտադրանքը վաճառվում էր ինչպես տեղում, այնպես էլ հարևան նահանգներում ու գավառներում։ Սակայն ռուսական կապիտալիզմի զարգացման հետևանքով պղնձե առարկաների արտադրությունը նկատելիորեն կրճատվում է։ «Ձուլողը, որը ներկայումս անհետանում է, ձուլում էր մանղալներ, մոմակալներ և դրանց նման առարկաներ։ Այդ առարկաները մեծ մասամբ այժմ ավելորդ են դարձել, կյանքը փոփոխվելու պատճառով։ Օրինակ, նավթային լամպի սովորական դառնալը ավելորդ է դարձրել մոմակալը, իսկ եվրոպական ձևի վառարանի մուտքը բնակարանի մեջ, դուրս է մղում մանղալը, որը մի ժամանակ յուրաքանչյուր ընտանիքի պետքերից մեկն էր։ Ներկայումս գոյություն ունեցող ձուլողները միայն վնասված առարկաներ կարկատելով են պարապում կամ եթե նոր գործ են կատարում, այն էլ պատվեր ստանալուց հետո. մինչդեռ առաջ ապրանք էին պատրաստում»[16] շուկայում աղատ վաճառելու համար։

Պղնձե առարկաների արտադրության հետ սերտորեն կապված էր անագապատման արհեստը։ Անագապատող վարպետները մեծ մասամբ շրջիկ էին։ Բայց կային նաև այնպիսի անագապատողներ, որոնք ունեին անշարժ արհեստանոցներ և միշտ գործում էին միևնույն տեղում։ 1860-ական թվականներին Օրդուբադի գյուղերում աշխատում էին անագապատող 3 տնայնագործ վարպետ և 4 աշակերտ[17], Նախիջևանի գյուղերում՝ 5 վարպետ և 10 աշակերտ[18], իսկ Երևանի գավառում՝ 4 վարպետ և 4 աշակերտ[19]։ Փաստերը վկայում են, որ 80—90-ական թվականներին այս արհեստավորների թիվը պահպանվել է համարյա նույնությամբ[20]։ Եթե պղնձագործությունը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում աստիճանաբար անկում էր ապրում, ապա անագապատման արհեստը հարատևում էր, քանի որ և՛ գյուղացիները, և՛ գավառային քաղաքներում ապրող բնակիչները ժամանակ առ ժամանակ իրենց պղնձե ամանեղենը երեսպատել էին տալիս անագի բարակ շերտով։

---

14 Ա. Ս. Ամբարյան, Ս. Լ. Ամբարյան, Նշվ. աշխ., էջ 200։

15 «Кавказский календарь на 1891 г.», Тифлис, 1900, стр. 231.

16 «Ազգագրական հանգես», գիրք Գ, Թիֆլիս, 1898, էջ 58։

17 ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 12, ց. 1, գ. 7, թ. 110։

18 ՀՍՍՀ ԿՊՊԱ, թ. 59։

19 ՀՍՍՀ ԿՊՊԱ, թ. 23։

20 ՍՍՀՄ Լենինգրադի կենտրոնական պատմական պետական արխիվ, ֆ. 1263, ց. 2, գ. 5190, թ. 101։

Հայաստանի և առհասարակ Անդրկովկասի արհեստավորները պատրաստում էին նաև արույրե առարկաներ։ Արհեստի այս ճյուղը Անդրկովկաս մուտք գործեց Արևմտյան Հայաստանից և մեծ տարածում ստացավ Կարսում ու Ալեքսանդրապոլում։ Այս արհեստով հիմնականում զբաղվում էին հայերը, որոնք իբրև հումք օգտագործում էին պղինձը և ցինկը։ Նրանք արույրից պատրաստում էին մոմակալներ, հավանգներ, զանգեր, ափսեներ և զանազան հուշանվերներ։ Դրանք վաճառվում էին ըստ կշռաչափի։ Մեծ չափեր ունեցող առարկաների մեկ ֆունտն արժեր 20 կոպեկ, իսկ ավելի նուրբ և փոքրիկ առարկաներինը՝ 40 կոպեկ։ Արույրագործ վարպետի տարեկան միջին աշխատավարձը կազմում էր մոտ 100 ռուբլի[21]։ Արույրագործությունը Հայաստանում երկրորդական արհեստների թվին էր պատկանում։ Դրա համար էլ 1850—1880 թթ. և հետագա տարիների արհեստների մասին եղած գրավոր վկայություններում ոչ մի տվյալ չկա այդ զբաղմունքի մասին։

Մինչև XIX դ. 70—80-ական թվականները Արևելյան Հայաստանում լայնորեն տարածված էր ոսկու և արծաթի մշակումը։ Ոսկերիչները և արծաթագործները զբաղված էին ոսկյա զարդերի պատրաստմամբ, արծաթյա գավաթների ու ամանների ոսկեզօծմամբ, դաշույնների, գոտիների և այլ առարկաների վրա փորագրություններ կատարելով։ Նրանց արտադրած առարկաներն, իրենց ինքնատիպությամբ ու գեղեցկությամբ, հետաքրքրություն էին առաջացնում ոչ միայն երկրի ներսում, այլև նրա սահմաններից դուրս։ Առկա հետազոտությունների համաձայն՝ ոսկերիչ վարպետի օրական միջին վաստակը կազմում էր 80 կոպեկից մինչև 1ռ. 20 կոպեկ[22]։ XIX դ. վերջում, ինչպես մետաղագործության մյուս ճյուղերի, այնպես էլ ոսկյա և արծաթյա տեղական առարկաների արտադրությունը չդիմանալով մոսկովյան և այլ ֆաբրիկային արտադրության մրցակցությանը, անկում է ապրում։ Սա, իհարկե, չի նշանակում, թե տեղական արտադրանքն ցիր որակով զիջում էր ներմուծվողին, ընդհակառակը, դրանք բավական նուրբ էին ու կատարելագործված։ «Սակայն այդպիսի բարձր որակով արտադրանքը չէր կարող ապահովել պահանջված քանակությունը, որովհետև աշխատանքի բաժանումը և մասնագիտացումը թույլ էր զարգացած»[23]։ Բացի այդ, արդեն Անդրկովկաս ներթափանցած եվրոպական պարզ, նորաձև հագուստները գործածությունից դուրս էին մղում կովկասյան հնամենի տարազները, որոնց հետ միասին գալարում էր նաև հագուստները զարդարող արծաթյա լարերի, զարդաքանդակ դաշույնների և նման այլ մետաղյա իրերի ու առարկաների արտադրությունը։

1873 թ. աշխարհագրի տվյալներում հատուկենտ ենք հանդիպում այնպիսի գյուղերի, որտեղ դեռ պահպանվում էին արհեստավոր ոսկերիչ-արծաթագործներ, իսկ 80—90-ական թվականներին նրանց թիվը ավելի է պակասում[24]։

Այսպիսով, փաստերը վկայում են, որ XIX դ. երկրորդ կեսին մետաղագործական արհեստագործությունը շարունակում էր նշանակալից դեր խա-

---

21 Կ. Хатисов, նշվ. աշխ., էջ 65։

22 Նույն տեղում, էջ 78։

23 С. Егиазаров, Исследования по истории учреждений в Закавказье, ч. 1, Казань, 1889, стр. 81.

24 ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 93, ց. 1, գ. 177, թթ. 305—310, գ. 178, թթ. 506—579, 605—613, գ. 180, թթ. 322—341, ֆ. 125, ց. 1, գ. 8, թթ. 30—31, գ. 14, թ. 70։

ղալ Արևելյան Հայաստանի տնտեսական կյանքում, թեև արհեստագործության այդ ճյուղի որոշ տեսակներ դուրս էին մղվում, իրենց տեղը զիջելով տնտեսության համար նոր ու կարևոր արհեստատեսակների։ Դարավերջում արդեն կազմակերպվում էին այնպիսի արհեստանոցներ, որոնք աստիճանաբար յուրացնում էին կապիտալիստական արտադրաեղանակի տարրերը։

ОЧЕРК ИСТОРИИ МЕТАЛЛООБРАБАТЫВАЮЩИХ РЕМЁСЕЛ ВОСТОЧНОЙ АРМЕНИИ
(вторая половина XIX в.)

ГОАР АРАКЕЛЯН

Резюме

В середине XIX в. металлообрабатывающее ремесло (кузнечное, слесарное, лудильное, ювелирное и т. д.) продолжало играть значительную роль в хозяйственной жизни Восточной Армении. К этому времени стали терять свое значение медное, латунное, оружейное и др. ремёсла.

В конце XIX в. в металлообрабатывающем производстве наблюдаются признаки капиталистического мануфактурного производства. Появляются такие мастерские, которые постепенно усваивают элементы капиталистического способа производства.